# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2023թ. թիվ 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 59-Ա ԵՎ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի փետրվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի խորհրդի նիստ հրավիրելու մասին» թիվ 59-Ա որոշման մեջ «փետրվարի 22-ին ժամը 11:00-ին» բառերը փոխարինել «փետրվարի 28-ին ժամը 15:00-ին» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023թ. փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի խորհրդի 2023 թվականի փետրվարի 22-ի նիստի օրակարգի նախագիծը սահմանելու մասին» թիվ 69-Ա որոշման վերնագրում և տեքստում «փետրվարի 22-ի» բառերը փոխարինել «փետրվարի 28-ի» բառերով, իսկ որոշման հավելվածի մեջ «22.02.2023թ.» բառերը փոխարինել «28.02.2023թ.» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

17/02/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք.Վանաձոր